ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սույն թվականի մայիսի 6-ին, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանի, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Վարդանյանի, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի նախագահության նախագահի տեղակալ Գ. Գալոյանի ուղեկցությամբ, Մայր Աթոռ այցելեց և Վեհափառ Հայրապետի հետ հանդիպում ունեցավ Սովետական Միության Գիտությունների ակադեմիայի նախագահության նախագահ Գ. Մարչուկը:

Վեհափառ Հայրապետի և բարձրաստիճան հյուրերի միջև տեղի ունեցավ սրտագին զրույց՝ ջերմ մթնոլորտում:

*
* *

Սույն թվականի մայիսի 9-ին Մայր Աթոռ այցելեց և Վեհափառ Հայրապետի հետ հանդիպում ունեցավ ՍՍՀՄ-ում Իտալիայի դեսպան տիար Սերջո Ռոմանոն՝ իր տիկնոջ հետ:

*
* *

Սույն թվականի մայիսի 23-ին Վեհափառ Հայրապետը ընդունեց ՍՍՀՄ-ում հավատարմագրված լրագրողներին՝ հետևյալ երկրներից. Բուլղարիա, ԳԴՀ, Լեհաստան, Հունգարիա, Մոնղոլիա, Չեխոսլովակիա, Ռումինիա և Վիետնամ:

Պատասխանելով լրագրողների հարցերին, Նորին Սրբությունը նրանց պատմեց հայ ժողովրդի և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու անցյալի ու ներկայի մասին՝ ընդգծելով մանավանդ 1915 թվականի ցեղասպանությունից փրկված հայ ժողովրդի ազգային, մշակութային և եկեղեցական բարգավաճումը Խորհրդային Հայաստանում:

*
* *

Սույն թվականի մայիսի 23-ին Մայր Աթոռ այցելեց և Վեհափառ Հայրապետի հետ հանդիպում ունեցավ անգլիացի գեներալ Մայքլ Հարբոտտլը՝ իր տիկնոջ հետ:

Պրն. Հարբոտտլը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց Անգլիայի խաղաղության պաշտպանների գեղեցկահյուս աղոթքը՝ հույս հայտնելով, որ խաղաղության պաշտպանության ուժերի համատեղ ջանքերով հնարավոր կլինի աշխարհը փրկել միջուկային պատերազմից:

*
* *

Սույն թվականի մայիսի 28-ին Մայր Աթոռ այցելեց և Վեհափառ Հայրապետի հետ հանդիպում ունեցավ ՍՍՀՄ-ում Ֆինլանդիայի դեսպան տիար Առնո Կարխիլոն՝ իր տիկնոջ հետ:

*
* *

Սույն թվականի հունիսի 7-ին Մայր տաճարում Հոգեգալստյան ս. պատարագին և քահանայական ձեռնադրության ներկա գտնվեց և հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի հետ հանդիպում ունեցավ ՍՍՀՄ-ում Ֆրանսիայի դեսպան տիար Իվ Պանիեզը՝ իր տիկնոջ հետ:

ԱՂՈԹՔ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Առաջնորդիր ինձ մահից դեպի կյանք,
Կեղծիքից՝ դեպի ճշմարտություն:

Առաջնորդիր ինձ վհատությունից դեպի հույս,
Վախից՝ դեպի վստահություն:

Առաջնորդիր ինձ ատելությունից դեպի սեր,
Պատերազմից՝ դեպի խաղաղություն:

Թող խաղաղությունը ողողի մեր սիրտը,
Մեր աշխարհը, մեր տիեզերքը:

Խաղաղություն, խաղաղություն,
խաղաղություն:

ՁԱԽԻՑ ԱՋ՝ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՄԱՐԶՈՒԿ, ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ, ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ֆ. ՍԱՐԳՍՅԱՆ, ՀՍՍՀ ԳԱ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ Գ. ԳԱԼՈՅԱՆ ԵՎ ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՁԱԽԻՑ ԱՋ՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍ, ԳԵՆԵՐԱԼ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ, ԳԵՆԵՐԱԼ Հ. ՍԻՄՈՆՅԱՆ,
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՎ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՀԱՐԲՈՏՏԻ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԴԵՍՊԱՆ ՊՐՆ. ԱԱՐՆՈ ԿԱՐԽԻԼՈՅԻ ՀԵՏ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄՆ-ԻՑ ԺԱՌԱՆԱԾ ԿՐՈՆԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ
(26 մայիս, 1987 թ.)